Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

«25» 01 2023թ.

ք. Գորիս

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Ա. Միրզոյանս ուսումնասիրելով թիվ 08867242, թիվ 08883466, և թիվ 09279340 կատարողական վարույթների նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ1/0940/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Գասպար Բաբայանից, Եղիշե Բաբայանից, Հրայր Ղևոնդյանից և Վարազդատ Դանիելյանից համապարտության կարգով հօգուտ «Ակբաբանկ» ԲԲԸ-ի բռնագանձել 1.722.508 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ2/0701/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Արմեն Անդրանիկյանից, Սոնա Հովակիմյանից, Վարազդատ Դանիելյանից համապարտության կարգով հօգուտ «Ակբաբանկ» ԲԲԸ-ի բռնագանձել 1.940.041 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ3/1737/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Աիդա Մարգարյանից, Ավագ Ղևոնդյանից,Վարազդատ Դանիելյանից և Դանիել Դանիելյանից համապարտության կարգով հօգուտ «Սեֆ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի բռնագանձել 1.178.996 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Կատարողական վարույթով վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապան Վարազդատ Թևանի Դանիելյանին պատկանող միջոցների վրա բռնագանձում տարածելու պարագայում պարզվել է, որ այդ միջոցներն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի և ավելիի չափով չեն բավարարում պահանջատիրոջ հանդեպ ունեցած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 հոդվածների և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել թիվ 08867242, թիվ 08883466, և թիվ 09279340, կատարողական վարույթները 90-օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով այն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ Ա.ՄԻՐԶՈՅԱՆ